ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 492-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԿԱՐԲԻԻ Վ. ԹԵՔԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՔՆԱՐԻԿ ՄԱՅԻԼՅԱՆԻՆ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ կետով, 173-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով Քնարիկ Մայիլյանի 2026 թվականի նոյեմբերի 6-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Կարբիի Վ. Թեքեյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Քնարիկ Մայիլյանին 2026 թվականի նոյեմբերի 9-ից տրամադրել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ:

Ստորագրող
ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ
3309890457

ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. նոյեմբերի

ք.Աշտարակ